ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 12.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/14

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Արֆարմացիա» ՓԲԸ-ի 06.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Արֆարմացիա» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Արֆարմացիա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 06.02.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՈւԱԿ-ԲՄԱՊՁ-18/3 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ 2017թ. դեկտեմբերի 12-ի N 2 որոշմամբ 14.12.2017թ. հրավեր է ներկայացվել «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով:

Վերոնշյալ գնման հրավերի 1.1 կետով սահմանված գնման առարկայի 63-րդ չափաբաժնում նախատեսված է գնել բժշկական թթվածին բալոններով, որի մատակարարման համար հայտ է ներկայացրել նաև «Արֆարմացիա» ՓԲԸ-ն: Հանձնաժովի կողմից 23 հունվարի 2018թ. ժամը 11:00 կազմվել է թիվ 2 արձանագրություն, որի 7-րդ կետի

համաձայն մասնակիցներից «Արֆարմացիա» ՓԲԸ-ն 63-րդ չափաբաժնով 2500 հատ բժշկական թթվածնային բալոնների համար առաջարկել է 5,250,000 (հինգ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամ առանց ԱԱՀ և ԱԱՀ-ն ներառյալ 6,300,000 (վեց միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ մասնակիցներից «Դիոկսիդ» ՍՊԸ-ն նույն չափաբաժնով առաջարկել է 5,450,000 (հինգ միլոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: Հանձնաժողովի 01.02.2018թ. N3 արձանագրության 3-րդ կետի 3.1 ենթակետով նշվել է, որ գնահատող հանձնաժողովը նախապատվությունը տալով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին քննարկելով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան հայտեր ներկայացրած գնային առաջարկները, նաև հաշվի առնելով այն, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի գնի առաջարկը ԱԱՀ-ն ներառյալ գերազանցում է 63-րդ չափաբաժնի համար նախատեսված առավելագույն գինը, իսկ «Դիոկսիդ» ՍՊԸ-ի առաջարկած գինը նույն չափաբաժնի համար չի գերազանցում այն, հինգ կողմ ձայներով որոշել է գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Դիոկսիդ» ՍՊԸ-ին 63-րդ չափաբաժնի մասով, իսկ «Արֆարմացիա» ՓԲԸ-ին՝ վերոնշյալ չափաբաժնով 2-րդ տեղ զբաղեցրած:

Գտնում ենք, որ ՈւԱԿ-ԲՄԱՊՁ-18/3 ծածկագրով գնահատող Հանձնաժողովի 01.02.2018թ. N3 արձանագրության 3.1 կետով կայացված «Դիոկսիդ» ՍՊԸ-ին 63-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցնելու որոշումը անհիմն է հետևյալ հիմնավորմամբ.

1. Նախ, որևէ ձևով հրավերում արտացոլված չի եղել հրավերի 63-րդ չափաբաժնի համար նախատեսված առավելագույն գինը:

2. Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ կետի՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց նույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ուստի, հիմք ընդունելով վերոգրյալ նորմը, գնահատող հանձնաժողովը Հրավերի 63-րդ չափաբաժնով «Արֆարմացիա» ՓԲԸ-ի առաջարկած գնային առաջարկը՝ 5,250,000 (հինգ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ առանց ԱԱՀ, ավելի նվազ գին պետք է ճանաչվեր, քան «Դիոկսիդ» ՍՊԸ-ի առաջարկած գինը նույն չափաբաժնի համար՝ 5,450,000 (հինգ միլոն չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ»:

Հիմք ընդունելով վերոգրյալ փաստական և իրավական հիմնավորումները և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով՝ Ընկերությունը խնդրել է փոփոխել ՈւԱԿ-ԲՄԱՊՁ-18/3 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 01.02.2018թ. N3 արձանագրության 3.1 կետով կայացված որոշումը և գնման առարկայի 63-րդ չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Արֆարմացիա» ՓԲԸ-ին՝ պարտավորեցնելով «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին վերոնշյալ չափաբաժնով սահմանված ապրանքի մատակարարման պայմանագիր կնքել:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Միքայել Ավետիսյանը:

2. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 06.02.2018թ. ներկայացված բողոքի վերաբերյալ 12.02.2018 թ. թիվ 01/10-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կենտրոն) 2018թ. կարիքների համար դեղորայքի գնման նպատակով www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպել է ՈւԱԿ-ԲՄԱՊՁ-18/3 ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել թվով 20 մասնակից, որոնց թվում են «Դիոկսիդ» ՍՊԸ-ն և «Արֆարմացիա» ՓԲԸ-ն:

Գնման ընթացակարգի հրավերի 63-րդ չափաբաժնով գնման առարկա է հանդիսանում բժշկական թթվածին բալոններով: Նշված չափաբաժնի մասով գնի առաջարկներ են ներկայացրել «Դիոկսիդ» ՍՊԸ-ն և «Արֆարմացիա» ՓԲԸ-ն:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ 63-րդ չափաբաժնում ներառված գնման առարկա հանդիսացող «բժշկական թթվածին բալոններով» ապրանքի ձեռքբերման համար որպես մեկ միավորի առավելագույն գին սահմանվել է 2,200 ՀՀ դրամ ԱԱՀ-ն ներառյալ, գնման

ընթացակարգի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել թվով 2500 բալոն (հատ) «բժշկական թթվածին բալոններով»: Գնման ընթացակարգի շրջանակներում «Արֆարմացիա» ՓԲԸ-ն 63-րդ չափաբաժնի մասով առաջարկել է թվով 2,500 բալոններով թթվածնի մատակարարման պայմանագիրը կատարել 5,450,000 ՀՀ դրամով (2,180=5,450,000/2,500): Սույն պարբերությամբ նշվածը գնահատող հանձնաժողովը արձանագրել է գնման ընթացակարգի թիվ 2 արձանագրությամբ:

Հաշվի առնելով, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի գնի առաջարկը ԱԱՀ-ն ներառյալ գերազանցում է 63-րդ չափաբաժնի համար նախատեսված առավելագույն գինը, իսկ «Դիոկսիդ» ՍՊԸ-ի առաջարկած գինը նույն չափաբաժնի համար չի գերազանցում այն, գնահատող հանձնաժողովը նախապատվությունը տալով նվազագույն գնի առաջարկ ներկայացրած մասնակցին որոշեց 63-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Դիոկսիդ» ՍՊԸ-ին: Ինչ վերաբերում է նրան, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ն իր բողոքում նշում է, թե հրավերում որևէ կերպ արտացոլված չի եղել 63-րդ չափաբաժնի համար նախատեսված առավելագույն գինը, հայտնում ենք, որ Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ գնման առարկայի պահանջվող ծավալը և մեկ միավորի առավելագույն գինը սահմանվում է պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմած գնման հայտով, իսկ մրցույթի հրավերում գնման առարկայի մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գնի մասին նշում չի կատարվում:

Նաև հայտնում ենք, որ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն՝ հանդիսանալով բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպություն, ՀՀ Հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն ազատված է ավելացված արժեքի հարկից: Հետևաբար, ավելացված արժեքի հարկի և առանց ավելացված արժեքի հարկի գումարները հավասարապես Կենտրոնի համար համարվում են ծախս:

Հաշվի առնելով վերագրյալը՝ գտնում ենք, որ գնի առաջարկների համեմատումը և մասնակցի ընտրությունը բխում է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքից»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Հարություն Օհանյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 06.02.2018թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, ի լրումն Բողոքի ներկայացված՝ Ընկերության 20.02.2018թ. գրությունը, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 12.02.2018թ. թիվ 01/10-18 գրությունը, «ՈւԱԿ-ԲՄԱՊՁ-18/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՈւԱԿ-ԲՄԱՊՁ-18/3» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 23.01.2018թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի N 2 և 01.02.2018թ. ժամը 12:00-ի N 3 արձանագրությունները, «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 18.01.2018թ. հաստատված 2018թ. գնումների պլանը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ն 2018թ. կարիքների համար դեղորայքի գնման նպատակով հայտարարել է ՈւԱԿ-ԲՄԱՊՁ-18/3 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որն իրականացվել է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտեր են ներկայացրել «Դիոկսիդ» ՍՊԸ-ն և «Արֆարմացիա» ՓԲԸ-ն:

Հանձնաժողովի 23.01.2018թ. ժամը 11:00-ի հայտերի բացման նիստի N 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 63-րդ չափաբաժնի համար «Արֆարմացիա» ՓԲԸ-ն 2500 հատ բժշկական թթվածնային բալոնների համար առաջարկել է 5.250.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ (ԱԱՀ-ն ներառյալ՝ 6,300,000 ՀՀ դրամ), իսկ «Դիոկսիդ» ՍՊԸ-ի նույն չափաբաժնի համար առաջարկած ընդհանուր գինը կազմել է 5.450.000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը 01.02.2018թ. N 3 արձանագրության 3.1 ենթակետով արձանագրել է, որ, գնահատող հանձնաժողովը նախապատվությունը տալով նվազագույն գնային առաջարկ ներկայցրած մասնակիցներին, քննարկեց գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան հայտեր ներկայցրած մասնակիցների գնային առաջարկները, նաև հաշվի առնելով այն, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի գնի առաջարկը ԱԱՀ-ն ներառյալ գերազանցել է 63-րդ չափաբաժնի համար նախատեսված առավելագույն գինը, իսկ «Դիոկսիդ» ՍՊԸ-ի առաջարկած գինը նույն չափաբաժնի համար չի գերազանցել այն, և որոշել է 63-րդ

չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Դիոկսիդ» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ին:

Ընկերությունը Բողոքով հայտնել է, որ ՈւԱԿ-ԲՄԱՊՁ-18/3 ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից կայացված «Դիոկսիդ» ՍՊԸ-ին 63-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու որոշումն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ. «Հրավերում որևէ կերպ արտացոլված չէ Ընթացակարգի 63-րդ չափաբաժնի համար նախատեսված առավելագույն (նախահաշվային) գինը, ինչպես նաև այն հիմնավորմամբ, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ կետի՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց նույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման: Ուստի, ըստ բողոքաբերի, հիմք ընդունելով վերը նշված դրույթը, գնահատող հանձնաժողովի կողմից «Արֆարմացիա» ՓԲԸ-ի 5,250,000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) կազմող գնային առաջարկը պետք է ճանաչվեր նշված չափաբաժնի համար առաջարկված նվազագույն գին, ինչին և պետք է հետևեր «Արֆարմացիա» ՓԲԸ-ին վերը նշված չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու Հանձնաժողովի որոշումը:»:

Բողոքի քննության նպատակով 12.02.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց այն փաստը, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի առանց ԱԱՀ գնային առաջարկը եղել է Ընթացակարգի 63-րդ չափաբաժնի համար նվազագույնը, սակայն նշեց, որ «Դիոկսիդ» ՍՊԸ-ին 63-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու որոշումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի գնի առաջարկը ԱԱՀ-ն ներառյալ գերազանցել է 63-րդ չափաբաժնի համար նախատեսված առավելագույն գինը, իսկ «Դիոկսիդ» ՍՊԸ-ի առաջարկած գինը՝ չի գերազանցել այն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն՝ գնման գինը ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ձեռք բերելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով հաշվարկված նախահաշվային գինն է:

Օրենքի 15-րդ հոդվածի՝

- 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը նույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում

գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն մասի համաձայն՝ կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Նույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

• 7-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

• 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց նույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

• 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:

գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն մասի համաձայն՝ կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Նույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

• 7-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

• 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց նույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

• 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:

• 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով (...):

• 21-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի՝

ա. 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա, ապա ապրանքների գնման դեպքում հայտով ներկայացվում է նաև ընթացակարգը կազմակերպելու կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքի ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրով (գործարքով) սահմանված մեկ միավոր գինը, եթե առկա է նման պայմանագիր (գործարք): Եթե նմանատիպ պայմանագիր առկա չէ, ապա դրա մասին հայտում կատարվում է նշում, իսկ գինը չի սահմանվում,

բ. 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, և առկա են պլանավորված, սակայն տվյալ գնման համար օրենքով սահմանված կարգով չնախատեսված ֆինանսական միջոցներ, հայտով ներկայացվում է նաև նմանատիպ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման համար պլանավորված մեկ միավորի առավելագույն գինը:

• 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

• 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

ՀՀ կառավարության 13.04.2017թ. N 390-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատվել է համաձայն նույն որոշման N 3 հավելվածի:

Համաձայն վերը նշված հավելվածի՝ գնումների պլանը լրացվում և հաստատվում է ըստ գնման առարկայի (միջանցիկ կոդը և անվանումը), գնման ձևի, չափի միավորի, միավորի գնի, քանակի և գումարի:

«ՈւԱԿ-ԲՄԱՊՁ-18/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերի՝

• 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

• 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

• 5.3 կետի համաձայն՝ եթե կնքվելիք պայմանագրի գինը կայուն է, ապա գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով և համակարգում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

• Հավելված 7-ով նախատեսված Ապրանքի մատակարարման պայմանագրի նախագծի 8.15 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Խորհուրդն, ուսումնասիրելով «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 18.01.2018թ. հաստատված 2018թ. գնումների պլանը՝ արձանագրում է, որ Պատվիրատուի գնումների պլանում ներառված «թթվածին v03an01» անվանումով գնման առարկայի միավորի գնման գին է սահմանվել 7.760.000 ՀՀ դրամը:

«Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով Խորհուրդը 26.02.2018թ. N ԳԲԽ-ԷՍ/1/[1213833]-18 գրությամբ հարցում է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալին՝ խնդրելով վերջինիս հանձնարարականը ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանմանը՝ տրամադրելու տեղեկատվություն ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/3 ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգում ներառված և «33691141» միջանցիկ կոդով ամրագրված գնման առարկայի նախահաշվային գնի, չափման միավորի, միավորի գնի և ձեռք բերվող քանակի վերաբերյալ:

Ի պատասխան Խորհրդի վերոհիշյալ հարցմանը ՀՀ ֆինանսների նախարարությունը ներկայացրել է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով ընթացակարգում ներառված «33691141» գնումների միասնական անվանացանկի կոդով ամրագրված գնման առարկայի վերաբերյալ պահանջված տեղեկատվությունը, համաձայն որի՝ նախահաշվային գին և միավորի գին PPCM համակարգում չի սահմանվել, քանի որ մրցույթն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, չափման միավոր է սահմանվել «հատ», իսկ մրցույթով ամրագրված քանակ՝ 2500:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է նաև, որ «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-18/3» ծածկագրով ընթացակարգի 63-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի մասով PPCM համակարգում սահմանվել է միայն մրցույթով ամրագրված քանակ՝ 2500, իսկ նախահաշվային (առավելագույն) գին և միավորի գին նույն համակարգում Պատվիրատուի կողմից չի սահմանվել:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ 01.02.2018թ. N3 արձանագրության 3.1 ենթակետով «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնի առաջարկը (ԱԱՀ-ն ներառյալ) Ընթացակարգի 63-րդ չափաբաժնի համար նախատեսված առավելագույն գինը գերազանցելու հիմնավորմամբ՝ վերջինիս նույն չափաբաժնի մասով երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 3-րդ մասով, Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 5.2 կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Արֆարմացիա» ՓԲԸ-ի կողմից 06.02.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Փոփոխել ՈւԱԿ-ԲՄԱՊՁ-18/3 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 01.02.2018թ. N 3 արձանագրության 3.1 կետով կայացված որոշումը և Ընթացակարգի 63-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Արֆարմացիա» ՓԲԸ-ին:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**